

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ — ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

**ՀՐԱՀԱՆԳ  
ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ  
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԳԵՈՒԳՐԱՏՆՏՍՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԳԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1934

## ՀԱՅԱՔՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

Հացահատիկային կուլսուրաների բերահավաքը ժամանակին, լիվ, վորակով ու առանց կորուսների կազմակերպելը տնտեսական-քաղաքական կարեվորագույն հարցերից մեկն է հանդիսանում, վորը պահանջում է կուսակցական, կոմյերիտական ու խորհրդային բոլոր որգանների, ինչպես և գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատող ինժեներա-տեխնիկական ուժերի, կոլտնտեսական ակտիվի և խորհրդային վողջ հասարակայնության լուրջ վերաբերմունքը, բերքահավաքն հաջող անցկացնելու համար:

Ինչ խնդիրներ է դնում մեր առաջ բերքահավաքը.

### 1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

1. Բոլոր կոլտնտեսություններում և խորհրդային տնտեսություններում բերքահավաքի աշխատանքների կոնկրետ ծրագրերը պետք է կազմել բերքահավաքից տոնվազն 20 որ առաջ, վորի մեջ տնտեսության բերքահավաքից զատ պետք է նախատեսնել նաև մոլախոտերով ուժեղ վարակված հողերում խոզանի այրումը, յերեւալարը (խոզանավար) միջնակների վրա, ճանապարհների ու առուների ափերին և ցանքադաշտերին մոտիկ ձորակներում տարածված մոլախոտերը արմատախիլ անելու—վոչնչացնելու աշխատանքները, քանի վոր այդ ձեռնարկումները, թե ըստ բնույթի և թե ժամանակագրական կարգով, բերքահավաքի անբաժան մասն են կազմում և նույնպես նպաստում բերքի բարձրացման գործին ու պայքարում կորուստների դեմ: Մատնանշված ձեռնարկումները պետք է նախատեսնել

ըստ բրիգադներին և վորոշ դեպքերում ել ըստ ողակների (հասկ հավաքող, մուխտուտեր հավաքող, փոխադրողներ և այլն):

Այս աշխատանքներն ուժեղ կազմակերպելու համար անհրաժեշտ ե ել ավելի բարձրացնել աշխատանքային դիսցիպլինան, լրիվ և ռացիոնալ կերպով ոգտագործել բանվորական ուրը:

2. Նախորոք վերանորոգել և կարգավորել գյուղգործիքներն ու մեքենաները, հարմարեցնել հատիկավորսողներ (зерноловители) և այլն: Բարդ մեքենաների՝ կոմբայն, կալսիչ, խրճկապ, ժնեյկա և այլն վերանորոգումից հետո ընդունել հատուկ մասնագիտական հանձնաժողովի կողմից և ձեակերպել այդ ընդունումը:

3. Հողբաժնի և ՄՏԿ-ի միջոցով կազմակերպել դաշտային շրջիկ արհեստանոցներ, ընթացիկ մանր վերանորոգումներ կատարելու նպատակով:

4. Ժամանակին կազմել բերքահավաքի մանր գործիքների (գերանդի, կամ, փոցխ, ավել, դուլեր, սրաքարեր, խարտոցներ, պարան և այլն) լրացուցիչ պահանջը և միջոցներ ձեռք առնել անմիջապես լրացնելու այդպիսիները:

5. Համաձայն նախապես ներկայացրած հայտերի, «Սելխոդանաբի» միջոցով մեկ տասնորյակի ընթացքում լրացնել նաև գյուղմեքենաների և մնացած գործիքների, ինչպես և պահեստի մասերի պակասը:

6. Ապահովել դաշտային պահակների հսկողութունն ամբողջ գյուղի և մասնավորապես սոց. սեկտորի ցանքադաշտերի վրա: Միաժամանակ կոլսնտովարչության կողմից սահմանել հատուկ և պարբերական վերահսկողութուն, վարչության անդամների անմիջական շրջագայությամբ:

7. Ստուգման յենթարկել միջգյուղյա և դաշտերի ճանապարհների, ինչպես և կամուրջների դրությունը: Կարուկ միջոցներ ձեռք առնել, մեկ դեկադում կարգավորել նկատված թերությունները:

8. Ագրոպերսոնալի և բրիգադիւրների միջոցով ձեռնարկել հացաբույսերի ցանքի ապրոբացիան, նպատակ ունենալով 1934 թ. աշնանացանի և 1935 թ. գարնանացանի համար ունենալ լավորակ, մաքուր, տեղի կլիմայական և հողային պայմաններին համապատասխան և հիվանդութուններից (մրիկ) ազատ սերմացու: Հիշյալ պահանջներին համապատասխանող ընտրված ցանքերը դնել հատուկ հսկողության տակ: Այդպիսի ցանքերի բերքահավաքը և կալսումը կատարել առանձին, չխառնելով մյուս ցանքսերին. ստացված բերքը պահել հետագայում բացառապես վորպես սերմացու ոգտագործելու համար:

9. Պահանջվելիք նավթամթերքների ապահովումը կատարել նախորոք ու ավարտել ամենաուշը բերքահավաքն ակսելուց 10 որ առաջ (հունիս ամսում):

10. Կատարել պահեստների և տարաների անհրաժեշտ վերանորոգումներ, մաքրել, ախտահանել, համարակալել և ամրացնել համապատասխան կոլտնտեսականներին: Բոլոր պահեստների հաշվառումն անպայմանորեն ունենալ հողբաժնում կամ ՄՏ Կայաններում:

11. Դաշտում կամ կալման վայրում ըստ բրիգադների ունենալ ահազանգման ազդանշան:

12. Բերքահավաքը կազդուրված քաշող ուժերով դիմավորելու նպատակով՝ բերքահավաքն ակսելուց 10—15 որ առաջ, լծկանին հանգիստ տալ և կազմակերպել ամբողջորյա կերակրում: Մասնավորապես թույլ և հյուժվածների վերաբերյալ ունենալ ավելի հոգատար վերաբերմունք:

13. Գիշերային յերկներթ աշխատանքի, ինչպես և կալերի պահպանման համար ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ լապտերներ:

14. Բոլոր կոլտնտեսություններում ունենալ համապատասխան կշեռքներ ու կշռաքարեր, ինչպես և հաշվառքի համապատասխան որդերներ, ձևեր և այլն:



15. Պատրաստել ցուցանակներ թե դաշտերի և թե կա-  
ւերի համար՝ կալսիչի, պահեստի, վառելանյութերի ամբար-  
ման կետերում և այլն, համապատասխան խորագրերով  
ա) «Ծխելն արգելվում է», ծխարան ունենալ կալից  
հետո.

բ) «Դաշտերը մտնել արգելվում է».

գ) «Դիշերային յերթեկոթյունն արգելվում է».

դ) «Գործ չունեցողը հեռանա» և այլն,

խիստ հետևելով նրանց կիրառմանը, պատասխանատու-  
թյան յենթարկելով խախտողներին:

16. Վորպես մասսայական-դաստիարակչական միջո-  
ցառում, իրիշովկայում, պատի և շրջանային թերթերում  
հաճախակի լուսաբանել բերքահավաքի նախապատրաստ-  
ման ընթացքը, խրախուսել, վեր հանել առաջավորներին  
և ընդհակառակը, պարսավանքի յենթարկել թերացողներին:

17. Բերքահավաքի ընթացքում կուլտ-սպասարկումը  
լավ հիմքերի վրա դնելու նպատակով հանգստի ժամերին  
կազմակերպել ռադիո հաղորդումներ, կինո ցուցադրում-  
ներ, թերթերի բարձրաձայն ընթերցում և այլն:

18. Բերքահավաքի ընթացքում ապահովել դաշտի  
հանրային ճաշը, այժմյանից առանձնացնել կենսամթերք-  
ներ և այլ պարագաներ (կաթնա, ափսեներ և գդալներ):

19. Հնձվորներ, խուրձկապողներ, մեքենավարներ  
նշանակել ամենավորակյալ հարվածային կոլխոզնիկներին:

20. Աշխատանքի ընթացքում ձշտել արտադրանքի  
նորմաները, յեղնելով առանձին դաշտերի և աշխատանքի  
կոնկրետ պայմաններից ու անշեղորեն և ճիշտ կիրառել  
անհատական և ողակային գործարքը:

21. Ստեղծել պարզևատրման ֆոնդ թե կոլխոզում և  
թե գյուղխորհրդում՝ բերքահավաքի հարվածային աշխա-  
տողներին պարզևատրելու նպատակով:

22. Գյուղում բերքահավաքի նախապատրաստական  
միջոցառումների մշակման և այն կիրառելու ընթացքին պետք

է մասնակից դարձնել գյուղի վողջ հասարակայնությանը  
(կոլխոզնիկ - մենատնտեսին), նամանավանդ ընդհանուր  
միացյալ ձեռնարկումների խնդրում, ինչպես ճանապարհա-  
շինարարությունը, կամուրջների կառուցումը, միջնակների  
մոլախոտերի այրում-վոջնացումը, գյուղմեքենաների նո-  
րոգումը, բերքահավաքի ժամկետների, դաշտերի հսկողու-  
թյունը և այլն:

23. ՄՏԿ-ին պատկանող բարդ մեքենաների ոգտա-  
գործման նկատմամբ առանձին կոլտնտեսությունների և  
ՄՏԿ-ների աշխատանքի ծրագրում ու մարշրուտներում  
հակասական դրություն չստեղծելու նպատակով անհրա-  
ժեշտ է կարճ ժամկետում ավարտել կոլտնտեսություն-  
ների բանվորական ծրագրերի կազմումը և նրանցից բղխեց-  
նելով՝ մշակել ՄՏԿ-ի մեքենաների ոգտագործման վերջ-  
նական ճշտված ծրագիրը, վերջինս հայտնել տեղերին և  
պայքարել նրա կատարման համար:

Վերը մատնանշված նախապատրաստական և կազմա-  
կերպչական միջոցառումներից զատ, բերքի կորուստների  
դեմ ճիշտ պայքար կազմակերպելու հաճար, անհրաժեշտ է  
տիրապետել աշխատանքի հետևյալ մոմենտներին:

## 2. ԲԵՐՔԱՆԱԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հացահատիկի բերքահավաքը պետք է սկսել յուրա-  
քանչյուր հասունացած հողակտորի վրա: Յուրաքանչյուր  
դեպքում բերքահավաքի ժամկետները վորոշվում են՝ յեղնե-  
լով տվյալ հացաբույսի տեսակի առանձնահատկությունից,  
հատկապես նրա շուտ կամ ուշ թափվելու, հասկերը շուտ  
կամ ուշ կտորվելու և մեքենայացման հնարավորություն-  
ներից: Հիշյալ աշխատանքներն անխափան կատարելու ու  
կորուստներից խուսափելու համար անհրաժեշտ է հիշել  
հետևյալ կանոնները:

1. Առնանացան «Ուկրայինկա» ցորենի բերքահավաքն  
սկսել յերբ, հատիկների հիմնական մասսան լինում է լրիվ

մոմային հասունացման շրջանում, ավելի ճիշտ մոմակալումից լրիվ հասունացման շրջանում:

«Ուկրալինկա»-ի բերքահավաքի տեղումթյունը 3—5 որից ավելի չպետք է լինի: Մնացած ուշ թափվող աշնանացանքերի հունձը կատարել հասունացման սկզբնական շրջանում, 5—8 որվա ընթացքում:

2. Տարեկանը պետք է հսձել մոմային հասունացման շրջանում: Բերքահավաքի տեղումթյունը 6—8 որից ավելի չպետք է լինի:

3. Գարնանացան ցորենի բերքահավաքը վորպես կասոն պետք է կատարել մոմային հասունացման և լրիվ հասունացման անցողիկ շրջանում, սակայն պետք է ի նկատի ունենալ, վորնույն դարնանացան ցորենների մեջ գոյություն ունեն շատ թափվող տեսակներ, վորոնց հունձը՝ մանավանդ ցածրագիր չորային ուայոններում, պիտի սկսել մոմային հասունացման շրջանում, ավարտելով այն 3—5 որում: Ավելի դիմացկուն, չթափվող տեսակների հունձն սկսել լրիվ հասունացման շրջանի սկզբում, համենայն դեպս 6—8 որից վոչ ավելի տեղումթյամբ:

4. Գարու բերանավաք նույնպես պետք է սկսել մոմային հասունացման ժամանակ, յերբ հասկը դեղնում է. առավել զգուշություն են պահանջում աշնանացան քառաշար կամ վեցշարքանի տեսակներ: Նույնը՝ հաճարի նկատմամբ, վորոնց հսձելու-հավաքելու տեղումթյունը 8—10 որից չպետք է անցնի, քանի վոր հաճարի հասկերը լրիվ հասունանալիս կտրվում են հասկիկներ:

Բերքահավաքի ժամկետների ճիշտ պահպանումը նախ այն նշանակությունն ունի, վոր հատիկները կամ հասկերը շատ հասունանալուց չեն թափվի, և մյուս կողմից՝ մեր գաշտերը մոլախոտերով վարակված լինելու այս որվա դրությունից կազատվեն, քանի վոր միամյա մոլախոտերը՝ վայրի վարսակը (խրիուկ), մանանեխը և մյուսները՝ կարճ

վեգետացյա ունեն և հունձի ու հավաքման ուշացումը նպաստում է նրանց լրիվ հասունացման, վորոնք այդ դեպքում ավելի շուտ և հեշտությամբ թափվում և վարակում են հողը:

Բերքահավաքի ուշացումը միանգամայն անթույլատրելի յե նախ այն պատճառով, վոր դրանից առաջ կգատերքի մեծ կորուստ, հատիկների և հասկերի թափվելու պատճառով, և ապա դա նպաստում է ուշահաս մոլախոտերի (գժվուկ, գայլուկ, աստղափշեր, պատատուկ, թթվաշ և այլ մոլախոտեր) սերմերի լրիվ հասունացման և նրանց սերմերի հետ թափվելուն, վորի հետևանքով հողը խիստ չափով վարակվում է:

Այս հանգամանքն ևս ասլացուցում է, վոր բերքահավաքի ժամկետների ճիշտ պահպանումը պայքար է բերքի կորուստների դեմ, պայքար է հացաբույսերի մաքրությունը, վորակը և քանակը բարձրացնելու համար:

### 3. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Բոլոր տեսակի մեքենաներով (խուրձկապ, հաց հնձող, ինչպես և գերանդիներով և մանգաղներով) հունձը կարելի յե կատարել բերքահավաքի սկզբին, իսկ կոմբայններով բերքահավաքը սկսել միայն հացահատիկների լրիվ հասունացման շրջանում, պահպանելով վերոհիշյալ կանոնները:

2. Կոմբայնով և խրձակալներով բերքահավաք կատարելու համար յուրաքանչյուր կորանտեսություն պարտավոր է ընտրել լավագույն հարթավայրերը, քարերից, մեծ կոշտերից ու փաթաթվող մոլախոտերից համեմատաբար զերծ տարածություններ:

3. Նախքան մեքենաների դաշտում աշխատելը, աշտի յեզրի քարքարոտ հատվածների հունձը և հավաքը պետք է կատարել գերանդիներով կամ մանգաղներով, դրանով իսկ պաշտպանելով այդ հատվածը փչացումից:

4. Հատիկակալներով (зерноуловитель) ապահովել բերքահավաքի բոլոր մեքենաները, ու աշխատանքի ընթացքում պարբերաբար ստուգել և դատարկել՝ կուտակված հատիկների կորուստ չտալու համար:

5. Կայծմարիչներով (огнеушилки) ապահովել դաշտում հացահատիկի հունձը կատարող և կալում կալսիչը շարժող մեքենաները:

6. Բերքահավաքը մեքենաներով կատարելուց հետո, մեքենայի բաց թողած տարածությունն անպայման քաղել մանգաղներով և գերանդիներով:

#### 4. ԽՐՁԵՐԻ ԿԱՊԵԼԸ ՅԵՎ ՀՆՁԱԾ ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ԶՈՐԱՑՆԵԼԸ

1. Հունձը կատարելուն զուգահեռ պետք է անմիջապես խրձեր կապել և բարդոցներում դասավորել:

2. Քոլաշի լրիվ ցամաքած և կանաչ մոլախոտերով փաթաթված լինելու դեպքում, մասսան մի քանի ժամ թողնել ցամաքելու, վորից հետո խրձեր կապել, սակայն պետք է հիշել, վոր նման դեպքում չի թուլլատրվում քուլաշը մեկ օրից ավելի թրղնել առանց կապելու:

3. Բարդոցներ դնելիս պահպանել հետևյալ կանոնները.—

ա) Խրձերը փոխադրել և տեղավորել զգուշությամբ.

բ) Խրձերը դեղերում դասավորել հասկերով դեպի ներս.

գ) Բարդոցներում խրձերը դասավորել այնպես, վոր աստիճանաբար դեպի վեր նեղանա և ապա ծածկվի, պատերը լինեն հարթ, վորպեսզի անձրևների ջրերը չկուտակվեն և չծծվեն դեպի մեջ.

դ) Բարդոցները դաշտում շարել մեկ ընդհանուր գծի վրա, վոր հնարավոր լինի հնձի աշխատանքներին զուգահեռ կատարել նաև յերեսվար (խողանավար).

յ) Շատ մանր բարդոցներ դնելն արգելվում է.

զ) Բարդոցներ դնելուց հետո ամբողջ դաշտը ձիու կամ ձեռքի փոցխերով փոցխել, կուտակել բարդոցների մոտ, կապել ու դիզել նրանց հետ, դրանից հետո դաշտում մնացած հասկերը ձեռքով հավաքել, ոգտագործելով այդ աշխատանքների համար նաև անաշխատունակներին և պիոներներին:

#### 5. ՀՆՁԱԾ ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ (ՔՈԼԱՇԻ) ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՅԵՎ ԴԻՋԵԼԸ

ա) Քոլաշի փոխադրման ընթացքում սեղի ունեցող կորուստների դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է՝

1. Փոխադրական միջոցները՝ սայլ, ֆորգոն, ավտոմեքենա և այլն, ապահովել այնպիսի հատակով և կողերով, վորոնցից հասկերն ու հատիկները չթափվեն: Այդ նպատակի համար կարելի չէ ոգտագործել խիտ ձիլոպները, կարպետները, բրեզենտները, ծղնոտային գործվածքները—(ջովեր) և վերջապես թիթեղ կամ տախտակ, բացի այդ սայլերը և ֆուրգոնները սարքավորել բարձրադիր ցանցերով, վորը կոգտագործվի ինչպես քոլաշի, նույնպես և դարմանի փոխադրման համար:

2. Սայլում դասավորելուց հետո յուրաքանչյուր բարդոցի տեղը ձեռքի փոցխով մաքրել և հավաքել:

3. Սայլերը վերջնական բարձելուց հետո, կողերից կախված հասկերը փոցխով սանրել ու հավաքել, տեղավորել սայլի մեջ:

4. Պարտավորեցնել բոլոր բրիգադաներին իրենց դաշտերում ունեցած բարդոցների ձիշտ հաշիվն ունենալ և դաշտից փոխադրելու ուղին նախորոշել: Միևնույն ստանայի քոլաշի փոխադրությունը կատարել միշտ նույն ճանապարհով, ընդունելով լավագույնը յեղած ճանապարհների մեջ, վորպեսզի ճանապարհին թափված հասկերը հետագայում նույնպես հավաքվեն:

5. Դաշտում բարդոցներ և խրձեր ունենալու դեպքում արգելել ինչպես անասունների արածեցումը, նույնպես և ոտար հասկահավաքների մուտքը:

## բ) Գ Ե Գ Ե Ր Դ Ն Ե Ն Ը

1. Նախքան քուլաշի փոխադրելը, նախորոք ընտրել բարձրագույնը, լավ պաշտպանված և ավելի հարմար տեղ (կալատեղ): Դեղերի տեղը մաքրել մոխրոտներից և ցուրուններից, հարթել, տակը փռել ծղնոտ կամ դարման, շրջապատը ջրատար առփակ փորել և ապահովել հակահրդեհային այլ հարմարանքներով, (դուլեր, բահեր, ավազ, ջրի տակառ, հակահրդեհային պոմպեր և այլն): Բացի այդ՝ դեղերի ամբողջ շրջապատն ստեղծել մեկուսացնող շերտ, փորի համար 2—3 մետր լայնությամբ խոր ակոսներով ողակած և վարել և միշտ պահել փուխը վիճակում ու այրման լենթակա նյութներից մաքուր:

2. Դեղերը դնել միմյանց դուգահեռ և կալսիչի աշխատանքներին հարմար, փորպեսզի ավելորդ փոխադրությունների տեղի չտրվի և կալսիչին վտանգ պատահելու դեպքում յերթեկեկության ճանապարհն ապահովված լինի:

3. Դեղերը քամիներից և անձրևներից պաշտպանելու նպատակով, խրճերը շարել խիտ, հարթ պատերով:

4. Դեղերի կուտակումը կատարել բնորոշ սառնանքից կամ ցանքաշրջանառության դաշտերից ստացված հատվածներով, դասավորելով այն ըստ բրիգադաների, փորպեսզի ստացված բերքի միջոցով հնարավոր լինի բրիգադաներին տրված արտադրական առաջադրանքներն ստուգել:

Նույն սկզբունքը պետք է կիրառել կալսման և բերքի հաշվառման ընթացքում, փորի մասին կանգ կառնենք առանձին:

5. Դեղեր դիզելիս չպետք է տարբեր սորտեր (գալգալոս, սպիտակահատ, կարմրահատ և այլն) իրար խառնել, յուրաքանչյուր սորտը դիզել առանձին առանձին:

## 6. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԼՍԵԼՈՒ ՇԱՄԱՐ

Կալսումը պետք է սկսել հացհունձի աշխատանքներին դուգահեռ, այն հաշվով, փոր հնձի աշխատանքներն սկսելուց փոչ ուշ, քան նրա վեցերորդ ուր, սկսված լինի:

Նաև կալսելու աշխատանքները: Կալսումը և նրա հաշվառումը կատարել ըստ ցանքաշրջանառության դաշտերի կամ սառնանքի (ուր ցանքաշրջանառություն չի կիրառված) և ըստ բրիգադաների:

Հաշվառման համար հիմք են ծառայելու փաստացի ստացված բերքը՝ առանձին կուլտուրաներով և սորտերով (ցորեն՝ դարնանացան, կարմրահատ, գալգալոս, աշնանացան, «Ուկրայինկա» և այլն):

Կալսման ընթացքում բերքի կորուստների դեմ պայքարելու նպատակով, ապահովել հետևյալ միջոցառումները:

1. Նախապատրաստվել ինչպես մեքենայացման յենթարկված կալսման, նույնպես և կենդանի ուժով՝ կամերով կալսելու համար:

2. Կալսիչի ոգտագործման դեպքում մեքենան կանգնեցնել ուղիղ, կարգավորել «դեկայի» և թմբուկի ատամների հեռավորությունն այն հաշվով, փոր հատիկները կորուստի չյենթարկվեն՝ դարմանի հետ գնալով և մյուս կողմից հատիկները կոտրելու պատճառով: Կալսիչի հաջող աշխատանքն ապահովված է լինում փոչ միայն նրան ուղիղ և անւառժ կանգնեցնելուց և թմբուկի միահամասոր պտույտներից, այլ նաև առավելապես թմբուկի և դեկայի միջի բացվածքի կարգավորումից: Դեկայի կարգավորումը պետք է հարմարեցնել կալսվող հացահատիկի բնույթին (խոշոր կամ մանր հատիկավոր, շուտ կամ ուշ փշրվող և այլն), սակայն բոլոր դեպքերումն էլ դեկայի և թմբուկի վերին բացվածքն ավելի լայն է սահմանվում, քան ստորինը՝ ցողունը դուրս հանող հատվածը: Կալսիչի աշխատանքների ամբողջ պատասխանատվությունը դրվում և մեքենավարի վրա և նա պարտավոր է ապահովել անխափան աշխատանքը:

3. Թաց քուլաշը յերբեք թույլ չտալ կալսիչի մեջ գցելու, փորովհետև նա պատճառ է դառնում բերքի կո-

ըուստներէ: Նման դեպքերում անհրաժեշտ է քուլաշը փոխել չորացնել, հետո նոր կալսել:

4. Բոլաշի մատակարարումը կալսիչի թմբուկի մեջ կատարել հավասարաչափ, առանց ընդհատումների և դանդաղկոտության, վորով միաժամանակ կարգավորած կլինենք մեքենայի նորմալ աշխատանքը: Թմբուկի վրա աշխատելու համար նշանակել ձեռնհաս, բանիմաց և նվիրված կորսնտեսականի:

5. Յեթե կալսիչը վորևէ պատճառով սերմերը լավ չի գտում կամ տեսակավորում, այդ դեպքում անհրաժեշտ է գտումը կազմակերպել անմիջապես տեղում, վորպեսզի առանց որ կորցնելու սերմֆոնդերը գտված և տեսակավորված կերպով առանձնացվեն 1934/35 թվերի ցանքերի համար:

Տեսակավորողները կարելի չէ շարժման մեջ դնել ուղղակի կալսիչի միջոցով (լրացուցիչ փոկերի միջոցով):

6. Վոչ մեքենայացված կալսումների դեպքում նույնպես սերմագտիչները և տեսակավորողները պետք է գործեն կալսման աշխատանքներին զուգահեռ, այն հաշվով, վոր կալից փոխադրվող ամբողջ սերմֆոնդերը գտված և պատրաստ ամբարվեն:

7. Սերմացուի համար ընտրված և առանձնացված դաշտերի բերքը կալսել և գտել ու տեղավորել առանձին:

8. Կամերով կալսված մասսան (թեղը, խայանը) արգելվում է մեկ որից ավել թողնել դարմանի մեջ. անհրաժեշտ է քամհարման յենթարկել:

9. Մոլախոտերի տարածման դեմ պայքարելու նպատակով ապահովել հետևյալ միջոցառումները՝

ա) Կալսման աշխատանքների ավարտումից հետո մոլախոտերի հողախառն անպետք մնացորդները (ազատկա-կուտ), միանգամայն զգուշ կերպով կալից մեկուսացնել:

Այդ խնդրում առավել ևս զգուշ պետք է լինել դաշտում կատարվող կալսման դեպքում:

բ) Մոլախոտերի թռչող սերմերի՝ աստղափուշի, սնձի և այլն տարածումը կանխելու համար՝ կալսիչի և քամհարի հարդատար բացվածքի առաջ կախել թրջված լաթ, ցանց և այլն: Այդ նույն նպատակով քուլաշի ծեծած, կամ կիսածեծած մասսան (խայան, հաշանը) ըստ հնարավորին քամու ժամանակ չշարժել կամ շրջել:

10. Կալսած հացահատիկների դարմանն ու ծղնոտն՝ առանց կորուստի տալու, նախապես տեղավորել հարմար շենքում և ծածկի տակ:

## 7. ԲԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ստացված բերքը դասակարգային թշնամու և նրա համախոհ հափշտակող, լողը և փնտսակար տարրերից պաշտպանելու նպատակով, սահմանել հետևյալ պարտադիր կանոնները. —

1. Հացաբույսերի մոմային հասունացման շրջանում և բերքահավաքի սկզբից մինչև ամբողջ դաշտային աշխատանքների վերջը, սահմանել հատուկ պահակներ, ինչպես դաշտերի, նույնպես և կալի ու պահեստների վրա, վորոնք պետք է զինված լինեն և իրենց մոտ ունենան վորոշ հարմարանք: Հրդեհից զգուշ լինել նամանավանդ յերեսխաների նկատմամբ, քանի վոր հրդեհներն առաջացնում են ալգայիսիները, դասակարգային թշնամու զրգամբ (նման փաստ ունենք 1933 թվին՝ Ախտայի շրջանի Թայշարուխ, Բժնի և այլն գյուղերում):

2. ՄՏԿ-ին պատկանող բոլոր կալսիչների մեքենավարներին ու հաշվառող-կշռողներին պահում է ՄՏԿ-ն, վորոնց ընտրության և պատրաստելու պատասխանատվությունը ընկած է ՄՏԿ-ի գիրեկտորի և քաղբաժնի վրա (Ժողկոմխորհի և Կենտկոմի 24/5—33 թ. վորոշմամբ):

3. Հաշվետուր գրի յե առնում կալսված հացահատիկն ըստ կուլտուրաների, սորտերի, հողամասերի և բրիգադա-

ների: Որդեր (накладное) և գրում, կազմում և անորոշ տեղեկագիր և արձանագրութիւն ամբողջ տարվա կալսված հացահատիկի մասին (բրիգադիրի հետ):

4. Կալսման ընթացքում հացահատիկի պահպանման պատասխանատվութիւնը դրվում և հաշվետու և բրիգադիրի վրա:

5. Հացահատիկը կալից բաց և թողնվում մթերման կայան կամ պահեստ բացառապես հաշվետու և բրիգադիրի կողմից կազմած և սայլապանին տրված որդերների հիման վրա:

Որդերները գրվում են յերեք որինակից, վորոնցից մեկը մնում և հաշվետու մոտ, իսկ յերկուսը հանձնվում և սայլապանին, որդերում պետք և գրվի յուրաքանչյուր սայլապանի անուն, ազգանունը, ուղարկվող պարկերի թիվը, կուլտուրան, տեսակը, վոր բրիգադայի, վոր հողամասից և և այլն:

6. Սայլապանը հացահատիկն ընդունելիս ստորագրութիւն և տալիս, ստանձնելով լրիվ կերպով հանձնելու պարտավորութիւն:

7. Հացահատիկ ընդունողը (պահեստապետ կամ մթերման կայան) յուրաքանչյուր դեպքում ստացած հացահատիկը համեմատում և սայլապանի կողմից ներկայացրած յերկու որինակ որդերների հետ և համապատասխան դիտողութիւն անում՝ լրիվ կամ թերի ստացման մասին: Լուրջ տարաձայնութիւնների դեպքում անմիջապես իրազեկ և դարձնում կոլխոզվարչութիւնը:

8. Հաշվետու և բրիգադիրը հացահատիկի հաջորդ պարտիան հանձնում են սայլապանին պահեստ փոխադրելու միայն այն դեպքում, յեթե սայլապանը նախորդ փոխադրված պարտիայի լրիվ հանձնելու մասին ներկայացրել և նախորդ պարտիայի որդերը, համապատասխան մակագրութիւն:

9. Կալսած հացահատիկի մեծաքանակ փոխադրու-

թիւնների դեպքում, նպատակահարմար և կազմակերպել փոխադրողների հատուկ խմբակ կամ ողակ 2—3 սայլից, առանձնացնելով նրանցից մեկին վորպես պատասխանատու ղեկավար, ըստ վորում կարգ սահմանել, վոր բոլոր դեպքերում սայլերը պետք և շարժվեն նախապես նշված միևնույն ճանապարհով, կատեգորիկ կերպով արգելելով վորևէ շեղում այդ ճանապարհից:

10. Փոխադրութիւն ժամանակ սայլի կամ ֆուրգոնի շարժվելու պատճառով փողոցում կամ ճանապարհին հացահատիկ կանգնեցնելու դեպքում, անմիջապես նշանակել հսկողութիւն:

Բերքահավաքին կազմակերպված դիմավորելու և պլանները մարտականորեն կատարելու նպատակով, շրջանային ակտիվի խորհրդակցութիւններում և գյուղերում ու բոլոր կոլխոզներում լայնորեն քննարկման և մասսայականացման յենթարկել բերքահավաքի վերաբերյալ այստեղ գրված բոլոր կետերը, լուսարանելով նաև տվյալ շրջանի կամ գյուղի յուրահատուկ պայմաններից բղխող անհրաժեշտ այնպիսի ձեռնարկումների տեխնիկական և կազմակերպչական մոմենտները, վորոնք բերքի կորուստների դեմ պայքարելու տեսակետից տվյալ շրջանի պայմաններում առանձնահատուկ արժեք են ներկայացնում:

Այնուհետև թուղցիկ ստուգումների միջոցով և կոնկրետ ղեկավարութիւն հետեւել շրջանային և գյուղական կազմակերպութիւնների կազմ ու պատրաստ լինելն ու առաջադրված խնդիրները/բոլշեիկներն կատարումը:

Սրբազրիչ՝ Խ. Մյվազյան  
Թույլատրված է Դավիթի լիազոր № 277  
Հանձնվել է արտադրության 1934 թ. հունիսի 1-ին  
Ստորագրվել է տպագրելու 1934 թ. հունիսի 9-ին  
Հրատ. № 121, տիրաժ 2000, պատվեր № 412

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂԴՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50



1934р. — 468

11

27898

1934р. 15 4.



**ИНСТРУКЦИЯ**  
**по уборке зерновых и по борьбе**  
**с потерями**